ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2025

ՀՏԴ
ԳՄԴ
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Կերպարվեստ 3»: Աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար /Սարգսյան Ս. Մ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր. : Էդիթ Պրինտ, 2025. - 24 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Մեթոդական ուղեցույցը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա. Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս.Վ.

Հեղինակներ՝
Սարգսյան Ս.Մ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս.Ս.
Օհանյան Հ.Վ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ.Գ., Դավթյան Հ. Լ.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի «Կերպարվեստ 3» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ.....11

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ.....18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....22

ՆԱԽԱԲԱՆ

Սովորողների կրթության, նրանց ներդաշնակ զարգացման գործում մեծ է կերպարվեստի դերը: Դպրոցում կերպարվեստի դասավանդման նպատակը գեղագիտական աշխարհընկալմամբ, հարուստ հոգևոր աշխարհով, գեղարվեստական ճաշակով և ստեղծագործական երևակայությամբ, ազգային և համամարդկային արժեքներին հարգանքով վերաբերվող, արվեստի գործերը հասկացող և գնահատող անձի ձևավորումն է:

3-րդ դասարանի կերպարվեստի գիրք-տետրը կազմված է հանրակրթության չափորոշիչներով առաջադրված խնդիրների, առարկայական գիտելիքների վերջնարդյունքների պահանջների և համապատասխան կարողունակությունների ձևավորման հիմքով:

Յուրաքանչյուր առաջադրանքի հանձնարարությունը ձևակերպված է ըստ սովորողի արդեն ձեռք բերած գիտելիքի, ներառելով նաև ուղղորդող հարցադրումներ, որոնք առավել նպաստում են առաջադրանքի բազմակողմանի ընկալմանը, ապահովում իմացածի և չիմացածի կապը: Ուղղորդող հարցադրումները, տեսական հարցերը, գործնական առաջադրանքները մշակվել են յուրաքանչյուր բովանդակության գնահատման չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով տարբերակված մոտեցումը:

Առաջադրանքները պարունակում են դեկորատիվ կիրառական գործունեություն, թեմատիկ նկարչություն, արտանկարչություն, բնօրինակից նկարչություն, ձևավորում, նկարչություն երևակայությամբ, հիշողությամբ, որոնց գործնական կիրառումը նպաստում է սովորողների մոտ հասարակական որոշակի հմտությունների, կարողունակությունների ձևավորմանը: Առկա են նաև ստեղծագործական բնույթի առաջադրանքներ: Հարցադրումները և վարժությունները մշակվել են՝ հաշվի առնելով միջառարկայական

կապը: Ուսուցման միջառարկայական մոտեցման նպատակն է խթանել երեխայի հետաքրքրասիրությունը և զարգացնել նրա հետազոտական գործունեությունը, որտեղ առանցքային նշանակություն ունի մասնագիտական գիտելիքը: Այս գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խաչվող հասկացություններին, որոնք ընդհանրական կերպով ապահովում են վերոնշյալ գործընթացի արդյունավետությունը: Գիրք-տետրի ծրագրային բովանդակության թեմատիկ ամբողջականությունը և հաջորդականությունը ենթադրում են կերպարվեստի հետ ամուր հուզական կապի ստեղծում ուսուցման տվյալ փուլում՝ բացառելով մեխանիկական կրկնությունները և ապահովելով սովորողի աստիճանական գեղարվեստական աճը:

Բոլոր առաջադրանքների անհատական կատարումը պարտադիր չէ. դրանց խնդիրները կարող են բաշխվել սովորողների միջև՝ կախված վարժության բարդությունից: Առաջադրանքները կատարելիս հարկ է ուշադրություն դարձնել առարկայական ծրագրի հիմնական գաղափարների գիտելիքահենք սկզբունքին, որոնք փոխադարձ կապի մեջ են միմյանց հետ:



Աշխատանքային գիրք-տետրի բովանդակությունը համապատասխանում է «Կերպարվեստ» առարկայի հետևյալ ուսումնական նպատակներին.

Օգնել սովորողներին՝

- ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում,
- կառուցել ֆիզիկական պարզ մոդելներ,
- բերել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ,
- դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողության պարզ հմտություններ և կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- հասկանալ իր առջև դրված խնդիրները, մշակել և կատարել քայլեր դրանք լուծելու համար,
- ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել դիտողականությունը՝ ձևավորելով ստեղծագործական և տրամաբանական մտածողություն,
- կիրառել տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար,
- ճանաչել և հարգել ՀՀ պետական խորհրդանիշները,
- արդյունավետ համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով՝ լսելով և հասկանալով այլոց կարծիքը, արտահայտելով սեփական տեսակետը:

Ձևավորել՝

- տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտություններ,
- սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքներին անդրադառնալու և արձագանքելու կարողություններ,
- իր առջև դրված խնդիրը մշակելու և այն լուծելու համար քայլեր կատարելու կարողություն,

- շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների և դրանց փոխադարձ կապերի մասին գիտելիքներ և դրանք նկարագրելու կարողություններ,
- պարզ ուսումնասիրություններ, առաջադրանքներ, եզրակացություններ կատարելու հմտություններ,
- նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար ստեղծագործական տարբեր եղանակներ կիրառելու կարողություն,
- տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու, այլոց կարծիքը լսելու և արձագանքելու կարողություններ,
- զգայարաններով ստացած տեղեկությունների՝ որպես աշխարհաճանաչողության միջոցի ընկալում,
- սեփական զգացմունքների ճանաչման, սեփական մտքերի, զգացմունքների, կարիքների և ցանկությունների արտահայտման կարողություններ և յուրահատուկ լինելու գիտակցություն,
- պարզ հիմնավորումներ, ընդհանրացումներ և դասակարգումներ կատարելու հմտություններ,
- անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու հմտություններ,
- փորձարկելու, հետազոտելու, երևակայելու, ձևավորելու, սեփական գաղափարներն ու զգացմունքներն արվեստի միջոցով արտահայտելու հմտություններ:

«Կերպարվեստ 3» աշխատանքային գիրք-տետրը տրամաբանական շարունակությունն է «Կերպարվեստ 1» և «Կերպարվեստ 2» աշխատանքային գիրք-տետրերի, որոնց հիմքում ուսուցման շտկող-զարգացնող սկզբունքն է, ինչպես նաև կերպարվեստի ընդհանուր զարգացնող հնարավորությունների իրացումը կրթության գործընթացում:

Առաջադրանքները բովանդակում են կերպարվեստային

այնպիսի գիտելիքների և հմտությունների կիրառում և ամրապնդում, որոնք աշակերտները յուրացրել են նախորդ ուսումնական տարիների ընթացքում, ինչպես նաև ենթադրում են ուսումնական տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքների արտահայտում:

Հանձնարարությունները ներառում են կերպարվեստային օրինաչափությունների բացահայտում սովորողների սեփական փորձառությամբ, աշխատանք կերպարվեստի տարբեր նյութերի օգտագործմամբ և տեխնիկական տարբեր հնարավորություններով, զարգացնում սովորողների տարածական պատկերացումները և ծավալային ընկալումը, գույնի, համաչափության, պարզ երկրաչափական պատկերների և մարմինների մեջ աշխարհը տեսնելու և բացահայտելու ունակությունները:

Սովորողների գեղարվեստաստեղծագործական գործունեությունն իրականացվում է՝ հաշվի առնելով նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները: Գիրք-տետրը կօգնի ընկալել և ճանաչել շրջապատող աշխարհը, համեմատության միջոցով բացահայտել առանձին առարկաների բնութագրիչները, վերլուծել համեմատության արդյունքները և արտահայտել կերպարվեստի լեզվով: Գիրք-տետրը ներառում է այնպիսի ընդհանրական գիտելիքներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս կերպարվեստային գրագիտության առանցքային հասկացությունների և նրանց ներքին կապերի ու առնչությունների մասին:

Գիրք-տետրը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք ապահովում են որոշակի գիտելիքների, ունակությունների ու հմտությունների պարտադիր պահանջներ, մեկ նախագծային աշխատանքից, ինչպես նաև հավելվածից և ուսուցչի գրառումների համար նախատեսված բաժնից:

Յուրաքանչյուր բաժին ամփոփվում է որոշակի

վարժություններով, որոնք պարունակում են նախորդ թեմայի հիմնական գաղափարը և հաջորդ թեմայի նախնական բովանդակությունը: Այդ առաջադրանքները կարելի է դիտարկել որպես ձևավորող գնահատականի հիմք: Առաջադրանքները հարմարեցված են սովորողների տարբեր հնարավորությունների բացահայտմանը, դրանց զարգացմանը և ընդհանուր առմամբ օգնում են զարգացնել կերպարվեստային հմտություններ (համապատասխանեցված անհատական ընդունակություններին ու հնարավորություններին): Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման շրջանակներում կարելի է կիրառել բարդության տարբեր աստիճանի մոտեցումներ:

Բովանդակային կառուցվածքը՝ «Գույնը միջավայրում», «Իրականություն և երևակայություն», «Համաչափություն», «Ստեղծում և կապակցում», «Կերպարվեստի ժանրեր», ուսուցչին լայն հնարավորություն է ընձեռում դասը կազմակերպել առավել ճկուն և արդյունավետ: Առաջադրանքները կառուցված են միջառարկայական փոխլրացնող կապերով, և ուսուցիչը դասը կարող է սկսել ցանկացած առաջադրանքից, ապա անցնել հաջորդին՝ ըստ առաջադրված նպատակի և դրանից բխող խնդիրների: Հարկ է ուշադրություն դարձնել, որ առաջադրանքները փոխկապակցված են նախորդ և հատկապես հաջորդ առաջադրանքի հետ: Կարևորվում է ձեռք բերած վերջնարդյունքի հիման վրա կարողունակությունների ձևավորումը:

Ուսումնական գործընթացի անքակտելիությունն ապահովելու նպատակով հարկ է ուշադրություն դարձնել նախորդ տարիների բովանդակային կառուցվածքին, որոնք յուրաքանչյուր դասարանի համար ամբողջական են, միևնույն ժամանակ տարբեր դասարաններում՝ փոխլրացնող:

1-ին դասարան

Աշխատանքային նյութեր
Գծեր և հարթություններ
Գույներ և երանգներ
Պատկերներ և ծավալներ
Մարմիններ և ծավալներ
Ծավալներ և կերպարներ

2-րդ դասարան

Լույս և ստվեր
Ուրվագիծ, ուրվապատկեր և ձև
Ձև և ծավալ

3-րդ դասարան

Գույնը միջավայրում
Իրականություն և երևակայություն
Համաչափություն
Ստեղծում և կապակցում
Կերպարվեստի ժանրեր

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Առաջադրանք 1

Միջառարկայական կապի ապահովման պարզագույն օրինակով սովորողների ուշադրությունը կենտրոնացվում է ինչպես թվերի, այնպես էլ գույների վրա: Շեշտադրվում է աշակերտների կենտրոնացումն այն հանգամանքին, որ գույնը նաև տարբերակելու միջոց է: Նույն առաջադրանքը կարելի է հանձնարարել առանձին թղթի վրա, որտեղ սովորողը կարող է ինքը որոշել՝ որ թիվն ինչ գույնով պատկերել: Կարելի է առաջարկել նաև, որպեսզի նախընտրելի գույներով գրեն իրենց անունը, կամ անվանատառերը:

Առաջադրանք 2

Ներկայացված գունային շրջանը աշակերտներն ուսումնասիրել են նախորդ դասարանում՝ հիմնական և բաղադրյալ գույների և նրանց մուգ և բաց երանգների ուսումնասիրման համապատկերում: Տվյալ դեպքում ակնառու կերպով ներկայացվում են տաք և սառը գույները, որոնց բնութագրիչների ցանկը կարող են շարունակել թվարկել սովորողները:

Առաջադրանք 3, 4

Առաջարկվում է, որ պաստելի և ջրաներկի տուփի մեջ սովորողները ցուցադրեն արդեն ձեռք բերած գիտելիքները գույների վերաբերյալ:

Առաջադրանք 5

Առաջադրանքի ձևակերպման մեջ օգտագործվել են «ուրվագիծ» և «ուրվապատկեր» հասկացությունները, որոնք ուսումնասիրվել են նախորդ դասարանում: Վարժությունը կատարելիս սովորողն ակամա

վերհիշում է տվյալ հասկացությունների մասին գիտելիքները, ամրապնդում: Միևնույն ժամանակ հավելվածի նյութերը փակցնելուց հետո տարանջատում է պատկերների տաք և սառը գույները:

Առաջադրանք 6-9

Միմյանց փոխլրացնող առաջադրանքներ են, որտեղ առանցքային նշանակություն ունեն առաջադրանք 7-ը և 8-ը: Տվյալ թերթը ծալվում է հավասար մասերի և գծիկների ուղղությամբ կտրվում պատուհան: Այնուհետև սովորողն ուղղում է թերթը և երկկողմանի պատուհանի միջով դիտում, թվարկում, մեկնաբանում է առաջադրանք 7-ում և առաջադրանք 9-ում կատարած հանձնարարություններում կիրառված գույները:

Առաջադրանք 10, 11

Տարվա եղանակներին բնորոշ գույներն ու երանգները նախ դիտարկվում են առանձին ծառի միջոցով, ապա բնանկարի տեսքով:

Ամրապնդվում են տարվա եղանակների մասին գիտելիքները, ուսումնասիրվում տարվա յուրաքանչյուր եղանակին բնորոշ գունահամակարգը՝ տաք և սառը գույներով, և այլն:

Առաջադրանք 12

Հավելվածի նյութի միջոցով սովորողներն ամբողջացնում են բնանկարը, որը բաժանված է երկու մասի՝ ցերեկային և գիշերային տեսարաններ:

Առաջարկվում է, որպեսզի աշակերտը աջ և ձախ հատվածների վանդակները ներկի այն գույնով, ինչ գույն տեսնում է: Սովորողը գույնի միջոցով ուսումնասիրում է բնանկարը, հետևաբար նաև ձևավորվում է միջավայրում գունային բազմազանության, օրվա տարբեր ժամերին միևնույն տեսարանի գունային, երանգային

տարբերության ընկալում, գույնի միջոցով որոշակի իրավիճակի նկարագրություն:

Առաջադրանք 13

Ուսումնասիրելով, թվարկելով տարվա եղանակների և օրվա տարբեր ժամերի գունային և երանգային հարաբերությունները՝ առաջարկվում է տարվա 4 եղանակների գույները, երանգները ներկայացնել սեփական տեսանկյունից, որը կարող է նաև հենք հանդիսանալ հաջորդող չորս առաջադրանքների կատարման գործընթացում:

Առաջադրանք 14-17

Շարունակելով, ընդգծելով, արտանկարելով առաջարկվում է պատկերել տարվա բոլոր եղանակները նախընտրելի գույներով:

Առաջադրանք 18-21

Գույնը հանդես է գալիս որպես խորհրդանիշ: Ուսումնասիրվում են ազգային և մի շարք այլ պետությունների դրոշները: Առաջարկվում է միախառնել դրոշների պատկերներում առկա գույները, որի միջոցով կամրապնդվեն յուրաքանչյուր դրոշի գույների, նրանց նշանակության մասին գիտելիքները:

Առաջադրանք 22, 23

Առաջադրանքները կազմված են միմյանց փոխլրացնող գույների տրամաբանությամբ: Հավելվածի նյութերի միջոցով և սեփական կերպարվեստային գործունեությամբ աշակերտները ստանում են որոշակի պատկեր, որոշակի գույնով: Տվյալ առարկայի գույնի անունը գրված է ներքևի հատվածում, սակայն հակադիր գույնով: Այս վարժությամբ հենք է նախապատրաստվում գույնի հաջորդական

ուսումնասիրությունների համար: Միևնույն ժամանակ ամրապնդվում են գիտելիքները ուրվապատկերի և ուրվագծի վերաբերյալ:

Առաջադրանք 24, 25

Ներկայացված առաջադրանքները լայն հնարավորություն են տալիս սովորողներին ինքնուրույն բացահայտելու ստեղծագործական գործընթացի հնարավորությունները: Առաջադրանքները կարելի է առաջարկել կատարել զույգերով:

Առաջադրանք 26, 27

Թղթե նեղ կպչուն ժապավենը փակցնելով գծերի վրա՝ թղթի հարթությունը բաժանվում է մի քանի մասերի: Առաջարկվում է այդ մասերը ներկել տարբեր նյութերով, միջոցներով, գույներով և մոտեցումներով, որոնք ուսումնասիրվել են մինչ այդ, կամ ուսուցիչն ինքը կարող է առաջարկել հասանելի մեթոդներ: Կարելի է նաև առաջարկել մեկ հատվածը լրացնել դաջման եղանակով, մյուս հատվածը պարզապես ներկել որևէ հիմնական գույնով, ֆրոտաժ տեխնիկայով, որը նախագծային դասի շրջանակում ուսումնասիրել են և այլն:

Պոկելով կպչունները՝ առաջարկվում է փակցնել աջ էջին և շարունակելով ավարտել աշխատանքը: Ձևավորվում են կոկիկության, համբերատարության, աշխատանքը ավարտին հասցնելու կարողություններ:

Առաջադրանք 28-31

Առաջադրանքները միտված են բացահայտելու սովորողների ստեղծագործական երևակայությունը ուղղորդված տարբերակով: Յուրաքանչյուր առաջադրանքում առկա են ուղղորդող հանձնարարականներ, որոնք ամրապնդում են գույնի,

երկրաչափական պատկերների մասին գիտելիքները:

Առաջադրանք 32-39

Համաչափության տարբեր հասկացությունների մասին առաջարկվող առաջադրանքները ակնառու ներկայացնում են որոշակի տեղեկատվություն: Նախ աշակերտը՝ բացահայտելով, ցուցադրելով, թվարկելով, հաշվելով, ինչպես նաև հավելվածի նյութերի օգտագործմամբ ծանոթանում է համաչափության այս կամ այն օրինաչափությանը, դրանց համամասնական նշանակության մասին տեղեկատվությանը, ապա պատկերում սեփական ընկալման և վերարտադրման հնարավորությունների սահմաններում:

Առաջադրանք 40-43

Դեկորատիվ գործունեության համապատկերում մաթեմատիկական պարզագույն միջոցով ներկայացվում է զարդագոտու կառուցվածքը, որից հետո առաջարկվում է ընդգծել ներկայացված զարդանախշը և գունավորել: Գույնի ընտրության հարցում առաջնահերթություն է տրվում աշակերտի նախընտրությանը, ապա առաջարկվում է շարունակել գունավորել զարդագոտին հստակ գույներով: Հաջորդիվ հնարավորություն է տրվում ստեղծել սեփական զարդանախշը՝ դրսևորելով ստեղծագործականություն:

Առաջադրանք 44, 45

Թռչնի պատկերման հաջորդական քայլերի նկարագրության ընթացքում աշակերտը ոչ միայն կրկնօրինակում է, այլ նախևառաջ հաջորդական քայլերը եզրագծում, ինչը հնարավորություն կտա հաջորդ առաջադրանքում առավել ինքնավստահ պատկերել թռչունը:

Առաջադրանք 46, 47

Երևակայության դրսևորման և արտանկարչության սկզբունքներով կազմված առաջադրանքները հնարավորություն կստեղծեն ինքնարտահայտվել ինչպես խոսքով, այնպես էլ կերպարային արտահայտչականությամբ:

Առաջադրանք 48-49

Առաջադրանքները նախնական գիտելիքներ են հաղորդում հաջորդ թեմայի վերաբերյալ, ինչպես նաև ամփոփում նախորդ թեմաներից ձեռք բերած գիտելիքները:

Առաջադրանք 50-53

Կերպարվեստի ժանրերից նատյուրմորտի, բնանկարի և դիմանկարի առանձնահատկություններին միտված առաջադրանքներն առավել ստեղծագործական բնույթ են կրում: Կարևորվում են աշակերտների ինքնուրույնության աստիճանը, ինքնարտահայտման դրսևորումները ներկայացնող վարժությունները, որոնք ամփոփվում են գծանկարի հետագա ուսումնասիրության համար նախատեսված վարժությամբ:

ՆԱԽԱԳԻԾ

Գիրք-տետրում ներառված նախագծային աշխատանքի նպատակն է ամփոփել սովորողների ձեռք բերած գիտելիքները ինչպես գործնական, այնպես էլ տեսական գիտելիքների մակարդակով: Բացահայտվում է գործնական հմտությունների և կերպարվեստում որոշ հասկացությունների մասին գիտելիքների աստիճանը:

Մասնավորապես.

Հեռու և մոտ	Մոտ և հեռու
Մուգ և բաց	Բաց և մուգ
Բարձր և ցածր	Ցածր և բարձր
Փոքր և մեծ	Մեծ և փոքր
Տաք և սառը	Սառը և տաք
Ուժեղ և թույլ	Թույլ և ուժեղ

Նշված հասկացությունները հանդես չեն գալիս միմյանցից առանձին և փոխկապակցված են մեկը մյուսին:

Առաջադրանքը կարելի է կատարել անհատական, զույգերով (սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ), կամ խմբային աշխատանքի ձևաչափով: Այդպես աշակերտները սովորում են ծրագրել և համակարգել իրենց գործունեությունը, համաձայնության հասնել առաջադրանքի կատարման բովանդակության և ընթացքի հարցում, աշխատել կամ սովորել ոչ այնքան մրցակցային, որքան համագործակցային մթնոլորտում: Ընդհանուր առմամբ, աշխատանքային գիրք-տետրում առաջարկվում է այնպիսի մոտեցում ուսումնական գործընթացին, որը ենթադրում է ուսուցչի գործունեության բազմազանություն, ուսումնական գործընթացին ստեղծագործաբար մոտենալու ինքնուրույնություն, աշակերտների անհատականության դրսևորման խրախուսում ուսուցչի կողմից:

Նախագծային աշխատանքը նպատակ ունի առաջին հերթին սովորողների մոտ զարգացնել համագործակցային աշխատանքի հմտություններ: Տվյալ բնանկարը կարելի է պատկերել վատմանի վրա և տեղադրել դրա համար նախատեսված պատին: Առաջադրանքն ուսուցչին ինչպես ամբողջ դասարանի և յուրաքանչյուր աշակերտի ամփոփիչ գնահատման, այնպես էլ ինքնագնահատման, ինքնավերլուծության ու ինքնակատարելագործման հնարավորություն կտա:

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Բնանկար (բնապատկեր) – 1) Բնության՝ տեղանքի ընդհանուր տեսքը՝տեսարանը: 2) Բնության տեսարան վերարտադրող նկար՝ պատկեր: 3) Գեղարվեստական ստեղծագործություն, որի պատկերման առարկան բնությունն է:

Գիծ (խազ) - Որևէ հարթության երկու կամ ավելի կետերը միացնող ուղիղ:

Գծանկար (գծապատկեր) - Գրաֆիկական միջոցներով (ուրվագիծ, գիծ, բիծ) հարթության վրա պատկերված

ստեղծագործություն: Ընդհանուր առմամբ՝ գծերով ստեղծված պատկեր:

Գույն (երփ(ն), երանգ) - Առարկայից անդրադարձող լուսային ճառագայթներից աչքի ստացած տպավորությունը:

Գունանկար (գեղանկար, երփնանկար) - Որևէ հարթության վրա գունանյութերով (ջրաներկ, գուաշ և այլն) կատարված նկարչական ստեղծագործություն:

Գունահամակարգ (գունակարգ) - Իրականության գունային բազմազանությունը գեղագիտորեն վերակերպավորող գունահարաբերությունների համակարգ, գույնի երանգային հարաբերություններ:

Գունաշարք - Գույների հաջորդաշարք: Երանգային և միմյանց փոխլրացնող գույների հաջորդական դասավորությունը:

Դաջվածք (դրոշմ, տպվածք) - Թղթի, կտավի և այլ հարթության վրա դաջված, տպված նախշ: Դաջելու միջոցով ստացված նկար:

Դիմանկար (դիմապատկեր) – Դեմքի նկար, մարդու պատկերը ուսերից վերև: Գեղանկարում, գրաֆիկայում և լուսանկարչության մեջ կոնկրետ մարդու կամ մարդկանց խմբի դեմքի պատկեր:

Եզրագիծ (բոլորագիծ, սահմանագիծ) - Առարկայի եզրերի արտաքինագծագրությունը:

Երանգ (նրբերանգ) - Որևէ գույնի նուրբ տարբերակ, գույնի նուրբ աստիճանային անցում դեպի մուգը կամ բացը, որևէ գույնի մուգ կամ բաց տարբերակ:

Լույս (Ճառագայթ, փայլ, ճրագ) - Պատկերի լուսավոր՝ պայծառ հատված, որն արտացոլում է տարածության կամ առարկայի որևէ մասի առավել լուսավորվածությունը:

Լույսի աղբյուր - Գոյություն ունեն լույսի բնական և արհեստական աղբյուրներ: Մեզ համար լույսի հիմնական և բնական աղբյուրն Արեգակն է: Աստղերը նույնպես լույսի բնական աղբյուրներ են, սակայն մեծ հեռավորության պատճառով դրանցից մեզ հասնող լույսը շատ թույլ է: Լույսի բնական աղբյուր է նաև կայծակը: Լույս են արձակում նաև որոշ կենդանիներ, բակտերիաներ և միջատներ, օրինակ՝ լուսատտիկը: Լույսի արհեստական աղբյուրները ստեղծվելեն մարդու կողմից: Լույսի արհեստական աղբյուրներ են մոմի բոցը, էլեկտրական լամպը և այլն:

Խնդիր (հարց, առաջադրանք) - Հետազոտության՝ քննության առարկա հանդիսացող հարց: Այն, ինչ առաջարկվում է կատարելու կամ պահանջում է լուծում:

Ծավալ (մեծություն, տարածություն, բովանդակություն) - Որևէ առարկայի եռաչափ մեծություն, որը չափվում է խորանարդային միավորով, պատկերի եռաչափտարածական արտացոլում:

Կանոն (կարգ, օրենք) - Որևէ բանի կատարման հաստատված կարգ, լայն առումով՝ այն ամենը, ինչ մեկընդմիշտ հաստատված է և դարձել է օրինաչափ:

Համակարգ (դասակից, կարգակից) - Ընդհանուր հատկանիշներով ընդհանրացող որոշ կարգի միավորների՝ տարբեր մասերի ամբողջություն: Որևէ տեսության՝ ուսմունքի հիմնական դրույթների ամբողջություն:

Հյուսվածք (հորինվածք, գործվածք) - Որոշակի կազմություն և համակցություն ունեցող միասնական համակարգ:

Ձև (տեսք, կերպարանք) - Առարկայի արտաքին տեսքը: Գեղարվեստական արտահայտության եղանակների համակարգը՝ որպես ստեղծագործության բովանդակության հաղորդման միջոց:

Մակատեսք (ծածկվածք, մշակվածք, արտաքին տեսք և ձև) - Տարբեր առարկաների հարթության արտաքին տեսքը և ձևը բնորոշող մշակման բնույթը, մակերևույթի տեսքը: Գեղարվեստական ստեղծագործության մակերեսի, նրա մշակվածության կերպը:

Նախագիծ (ծրագիր) - Աշխատության՝ ստեղծագործության նախնական և ընդհանուր քայլաշար, որի մեջ տրվում է կառուցվածքի (վերջնարդյունքի) ընդհանուր բնութագրությունը:

Նատյուրմորտ (իրանկար) - Անշարժ, անշունչ առարկաների, իրերի պատկերում, սովորաբար ներառում է կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, կենցաղային կամ մասնագիտական առարկաներ և այլն:

Ներդաշնակություն (համապատասխանություն) - Մասի և ամբողջի, ներքինի և արտաքինի, ձևի ու բովանդակության համաչափություն և միասնություն:

Նպատակ (առաջադրություն, ծրագիր) - Այն, ինչի ձգտում են՝ ուզում են հասնել, ձգտման առարկան: Ցանկալի, ակնկալվող վերջնարդյունք, որը պլանավորում և որին պարտավորվում են հասնել անձնական կամ կազմակերպական ցանկալի վերջնակետի ակնկալվող զարգացման պարագայում:

Շարժում (երերում, ծածանում, տատանում) - Մարմնի, առարկայի դիրքի փոփոխություն այլ մարմինների նկատմամբ:

Ռիթմ (կշռույթ) - Չափ, որևէ բանի հաջորդականության՝ պարբերականության, դադարների ու կրկնության տևողություն, համաչափ հերթագայություն:

Ստվեր (շվաք, մթություն) - Լույսի ցանկացած աղբյուրի ճառագայթներից որևէ առարկայով պաշտպանված՝ զերծ մնացող տարածություն: Որևէ մակերևույթի՝ առարկայի և այլնի վրա ընկնող մուգ անդրադարձում, որ ստացվում է հակառակ կողմից լուսավորված առարկայից:

Ուրվագիծ (եզրագիծ) - Առարկայի ընդհանուր տեսքի արտաքին գծագրությունը:

Ուրվապատկեր (ուրվանկար) - Ուրվապատկերային նկար: Առարկայի ընդհանուր տեսքի արտացոլանք, անդրադարձված հարթապատկեր:

Ֆրոտաժ - Ֆրանսերեն՝ frottage (շփում) բառից: Գեղարվեստական տեխնիկա, երբ թղթի դատարկ թերթը տեղադրվում է անհարթ մակերևույթ ունեցող առարկաների վրա, այնուհետև մատիտով, պաստելով կամ այլ կարծր գունանյութով շփելով՝ թղթի հարթության վրա ստացվում է տվյալ հյուսվածքի գրաֆիկական դրոշմվածքը (պատճենը):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ա. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Ա. Ադամյան, Հ. Վ. Օհանյան, Արդյունավետ հարմարեցումներ: Որակյալ կրթություն: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան-2022, Հայաստան, էջ 25-30:
2. Երզնկյան Մ., Բաղդասարյան Ա. - Կերպարվեստի բառագիրք: Ուսումնական ձեռնարկ: Զանգակ-97 հրատ., Երևան, 2002, 80 էջ:
3. Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա., Գևորգյան Ե. (Խմբ.) (2020) Ներառական կրթության ռազմավարություն: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, էջ 9-20:
4. ՀՊՉ Կերպարվեստ առարկայի չափորոշիչ և ծրագիր: ՀՀ կառավարության որոշում, № 136-Ն, 2021թ., 212 էջ:
5. Սարգսյան Ս. Մ. - Կերպարվեստ 2, ուսումնական նյութեր աշակերտների համար: «Աստղիկ գրատուն» հրատ. Երևան, 2021թ.:
6. Broderick A., Mehta H., & Reid, D. K. (2005). Differentiating instruction for disabled students in inclusive classrooms.
7. Carol Henry - Middle School Art. Issues of Curriculum and Instruction. Publisher: Natl Art Education Assn. 1996. 128 pages.

8. Darewych O. H., Carlton N. R., & Farrugie, K. W. (2015). Digital technology use in art therapywith adults with developmental disabilities. Journal on Developmental Disabilities, 1(2),95-102.
9. Derby J. (2016). Confronting ableism: Disability studies pedagogy in pre-service arteducation. Studies in Art Education, 57, 102-119.
10. Guay D. M. (1993). Normalization in art with extra challenged students: A problem solvingframework. Art Education, 46(1), 58-63.
11. LaMore K. L., & Nelson D. L. (1993). The effects of options onperformance of an art projectin adults with mental disabilities. American Journal of Occupational Therapy, 47, 397-401.
12. Pugach M. C., & Warger C. L. (2001). Curriculum Matters: Raising Expectations for Students with Disabilities. Remedial and Special Education, 196-213.
13. Siraj I. & Taggart B. (2014). Exploring Effective Pedagogy in Primary Schools: Evidence from Research. London: Pearson11.
14. Wendy Custable, Justin Fisk, Jonathan Grice, Darshan M. Jain, & 6 more - Proficiency-Based Grading in the Content Areas: Insights and Key Questions for Secondary Schools. Publisher: Solution Tree Press;1st edition. 2019. 431 pages.
15. Wexler, Alice & Luethi-Garrecht, Aleánna. (2015). Beyond Accommodations: Designing for Nonverbal/Nonauditory Learners in the Inclusive Art Room. Art Education. 68. 14-21.
16. Yoder Genevieve,(2018)."Adapted Art Curriculum: A Guide for Teachers of Students With Disabilities" (2018). Graduate Education Student Scholarship.
17. https://bararanonline.com

Սարգսյան Ս.Մ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43